Երուսաղէմի՝ գտաւ 'ի ժողովն Հռոմայ, և ոչ ընկալաւ զսահմանս նորա, բարկացեալ կայսեր կամեցաւ բանտարկել զնա, և նորա խոյս տուեալ անտի եհաս յաբեւելս՝ և Յովակիմ Յոյն Պատրիարքն Երուսաղէմի ընկալաւ զնա առ իւր, գրեաց և այլ Պատրիարքունս աթոռոց, և յայտ արար նոցա թէ՝ Կայսրն բռնադատեալ է զփոխանորդ իւր, հակառակ կամաց իւրոց ընդունիլ զսահմանս ժողովոյն, ժողովեցան առ Յովակիմ՝ Պատրիարքունք Աղէքսանդրիոյ, Անտիոքայ, Կեսարիոյ, և այլ արեւելեան կղերք. 'ի ժողովակի առաս սահմանեցին ոչ ընդունել զսահմանս ժողովոյն, և նզովիւք հերքեցին ոչ ընդունել զգլխաւորութիւն Պապին Հռոմայ։ Ընկեցին յաթոռոյ զՊատրիարքն Կոստանդինուպօլսոյ զՄեսրոփանոս, որ ընկալեալ էր զսահմանս ժողովոյն Հռոմայ։ Մեռաւ Յովհաննէս կայսրն, և նստաւ յաթոռ թագաւորութեան որդի նորին Կոստանդին (1449), վերջին կայսրն Յունաց։ Գնաց անդ Գրիգոր Պատրիարքն Երուսաղէմի յաջորդ Յովակիմայ, հասին և այլք, և ընկեցին զԳրիգոր Պատրիարքն մայրաքաղաքին իբր հետեւող Պապին, և եդին 'ի տեղի նորա զԱթանաս»։ Ի սմին ժամանակի երեւի շինեալ վանքն Ս. Փրկչի, որպէս յայտ առնէ յիշատակարան ձեռագիր մատենի. այսպէս, Տէր Յիսուս արդար բարի՝ ողորմեա Կարապետ վարդապետի Երուսաղէմացւոյ՝ որ բազում աշխատութեամբ եւ երկամբ զՍ. Փրկիչ եկեղեցին գնեցի յայլազգեաց և վանք շինեցի ըստ կարի իմում, որ է տեղիք շարչարանաց Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ, ուր կայ աստուածամերձ վէմն սեղան Պատարագի։ Զորս անգամ յԵգիպտոս իջի և առի թուղթ հրամանի յարքայէն Եգիպտոսի վասն խաղաղութեամբ կելոյ և շրջելոյ 'ի Տնօրինական տեղիս։ Իսկ այլք ասեն թէ Կարապետ վարդապետ աշակերտ Յովհաննու Արճիշեցւոյ 'ի Տոսպ գաւառէն, եկեալ ուխտ յԵրուսաղէմ, և տեսեալ զվանս Ս. Փրկչի, զոր յափշտակեալ Արաբացւոց արարեալ էին խան կամ ախոր, իջեալ յԵգիպտոս 4000 դահեկանի գնէ զտեղին 'ի Սուլթանէն, և վերստին շինէ զայն եկեղեցի։ Սակայն Արաբացիք 'ի հիմանէ կործանեցին զվանքն, յաւուրս Վասլի Պատրիարքի՝ որպէս գրեցաք, և 'ի յիշատակարանի չիք յիշատակութիւն ինչ արարեալ զայս